ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ, ԱՐԱՐԱՏԻ, ԱՐՄԱՎԻՐԻ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ, ԿՈՏԱՅՔԻ, ԼՈՌՈՒ, ՇԻՐԱԿԻ, ՍՅՈՒՆԻՔԻ, ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐԻ
ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ություն № 4-Լ

«04» հուլիսի 2024թ. ք. Երևան

2024 թվականի հուլիսի 04-ին, ժամը 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատում (այսուհետ՝ Պալատ) (ք. Երևան, Զաքյան փողոց 7-2, 4-րդ հարկ) տեղի ունեցավ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Շիրակի, Սյունիքի մարզերում մարզային համակարգողների ընտրությունների քվեաթերթիկների տպագրությունը:

Քվեաթերթիկների տպագրության գործընթացին ներկա են գտնվել Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աշոտ Խլոյանը, Հաշվիչ հանձնաժողովի անդամներ Կարինե Ղաշանգյանն ու Հեղինե Մանուկյանը:

Քվեաթերթիկների տպագրության գործընթացին հետևելու համար որևէ թեկնածու կամ թեկնածուի վստահված անձ չի ներկայացել: Քվեաթերթիկների տպագրության գործընթացին հետևելու ցանկություն չի հայտնել նաև որևէ դիտորդ:

Տպագրվել են.

- Շիրակի մարզի մասով՝ 69 հատ քվեաթերթիկ (67 հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 03.07.2024թ. դրությամբ և 2 հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով),
- Լոռու մարզի մասով՝ 82 հատ քվեաթերթիկ (79 հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 03.07.2024թ. դրությամբ և 3 հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով),
- Արարատի մարզի մասով՝ 64 հատ քվեաթերթիկ (62 հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 03.07.2024թ. դրությամբ և 2 հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով),
- Սյունիքի մարզի մասով՝ 43 հատ քվեաթերթիկ (41 հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 03.07.2024թ. դրությամբ և 2 հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով),
- Արմավիրի մարզի մասով՝ 67 հատ քվեաթերթիկ (65 հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 03.07.2024թ. դրությամբ և 2 հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով),
- Արագածոտնի մարզի մասով՝ 22 հատ քվեաթերթիկ (21 հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 03.07.2024թ. դրությամբ և 1 հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով):

Քվեաթերթիկները կնքվել են Հաշվիչ հանձնաժողովի կնիքով, փաթեթավորվել են պարկերում, որոնք ստորագրվել են Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աշոտ Խլոյանի, Հաշվիչ հանձնաժողովի անդամներ Կարինե Ղաշանգյանի ու Հեղինե Մանուկյանի կողմից, կնքվել են և Հաշվիչ հանձնաժողովի կնիքի ու ընտրողների ցուցակների հետ միաժամանակ տեղադրվել են չհրկիզվող պահարանում, որը պատշաճ կարգով կնքված կապարակնիքով փակվել է:

Սույն արձանագրությունը կազմվել է 2 օրինակից, որոնցից 1 օրինակը գտնվում է Հաշվիչ հանձնաժողովի մոտ, իսկ մյուս օրինակը պահվում է չհրկիզվող պահարանում՝ սույն արձանագրությունում նշված ընտրական փաստաթղթերի հետ միասին:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝	Աշոտ Խլոյան
Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝	Կարինե Ղաշանգյան
	Հեղինե Մանուկյան